



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 հուլիսի, 2016 թ.

ք. Երևան

«Պետական գնումների և պետական գույքի մասնավորեցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» հակակոռուպցիոն միջոցառման

2016 թվականի հուլիսի 14-ին Կապանում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «Պետական գնումների և պետական գույքի մասնավորեցման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով: Միջոցառումն նպատակն էր տվյալ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և համապատասխան լուծումների նախանշումը:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց ապրիլյան պատերազմից հետո պետության և քաղաքացիական հասարակության միավորվելու անհրաժեշտությունը և խոսեց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և կառավարության համագործակցության շոշափելի արդյունքներից:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող Նաիրա Գյուլնազարյանը նշեց. «Ես վստահ եմ, որ բիզնես հանրությունը կարևոր ներուժ պետք է հանդիսանա կոռուպցիայի դեմ պայքարում: Մա ամենաուժեղ ներուժն ունեցող սեկտորն է»:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը նշեց, որ այսօր ներդրված գործիքները թույլ են տալիս առավել թափանցիկ իրականացնել պետական գնումների գործընթացները, ինչն էլ նրանք իրականացնում են համայնքում:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման ու համակարգման բաժնի պետ Վահե Մահտեսյանը, խոսելով ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերից և իրականացված բարեփոխումներից, նշեց, որ ներկայումս մեկ անձից կատարվող գնումներն իրականացվում են ոչ թե նախկին անհայտ, այլ մրցակցային սկզբունքներով: Նրա խոսքերով՝ 2015թ. ընդհանուր գնումների մեջ մեկ անձից հրատարակված կատարվող գնումները կազմում էին 18,5 տոկոս, սակայն ներկայումս այս ցուցանիշը իջել է մինչև 8,5 տոկոս: Նախարարության ներկայացուցչի խոսքերով՝ ներկայումս նաև ներդրվել է 6 ամիսը մեկ անցկացվող կրկնակի մրցույթի գաղափարը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ, փաստաբան Մարիամ Զադոյանը, խոսելով պետական գույքի մասնավորեցման և գույքը գերակա շահ դարձնելու գործընթացում առկա վտանգների մասին, առաջարկեց այնպիսի ճկուն մեխանիզմներ մշակել, որ մեթոդները կիրառելիս բյուջեին վնաս չորվի: Նա նաև առաջարկեց փոփոխություն կատարել «գերակա հանրային շահ»-ի սահմանման մեջ և ներառել հստակ կառույցների, ոլորտների անվանումները, որոնց գործունեության բարելավումն իսկապես արտացոլում է հանրության գերակա շահերը:

Օրագրի բարեփոխումների հարցերով մասնագետ/իրավաբան Մյուզանն Սողոմոնյանը, խոսելով պետական գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման կարևորության և օֆշորային գոտիներից բխող վտանգների մասին, նշեց, որ անհայտ սեփականատերեր ունեցող շատ ընկերություններ, օֆշորային գոտիներում գրանցվելով, Հայաստանում հաղթում են պետական գնումների մրցույթներ և շատ պաշտոնատար անձինք չեն հայտարարագրում օֆշորային գոտիների բանկերում գտնվող իրենց հաշվեհամարները: Այս խնդիրները լուծելու համար փորձագետն առաջարկում է իրական սեփականատերերի ռեգիստրին այնպիսի օրենսդրական լծակներ տրամադրել, ինչպիսիք են բանկային և հարկային գաղտնիքների տիրապետումը, որպեսզի այն հնարավորություն ունենա ստուգել տրամադրված տեղեկատվության հավաստիությունը: Փորձագետը նաև մասնանշեց պայմանագրի խզման մի շարք հիմքեր:

Զեկույցներից հետո հնչեցին հարցեր, ծավալվեց արդյունավետ քննարկում: Տեղի ունեցան նաև խմբային աշխատանքներ:

Քննարկումների ընթացքում բարձրացված խնդիրները և առաջարկությունները կհավաքագրվեն և կներկայացվեն Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջիկա նիստերի ընթացքում, ինչպես նաև քննարկման համար կուղարկվեն համապատասխան պատկան մարմիններին:

Օրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում կհորատվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կորստավորվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Օրագրին իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացող)՝ «Բնֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31.117 եվրո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Օրագրի հանրային կայքի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00: Ինք. 540199; ֆաքս 580299; URL <http://www.armia.am>: Կառավարող՝ Նարինե Կարապետյան, էլ. փոստ՝ info@armia.am:



Օրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Շեռախոս՝ +37410 54 64 94
Շեռապատճեն՝ +37410 54 64 95

Եվրասիանաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նուս-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակ մասնակցական հատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողակառույցները և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

Օրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից
Շեռախոս՝ +374 10 229610
Շեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 54 01 99
Շեռապատճեն՝ +37410 58 02 99



Բնֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 56 03 60
Շեռապատճեն՝ +37410 56 03 60